Արձանագրություն N 2
«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կարիքների համար ՀՀ Երևան Դավթաշեն համայնքում Ֆուտբոլի ակադեմիայի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով թիվ «ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«10» «փետրվար» 2025թ.

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Նիստը տեղի ունեցավ **2025 թվականի հունվարի 29-ից փետրվարի 10-ը:**

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արմեն Նիկողոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Օֆելյա Կիրակոսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. **«ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1»** ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին
2. **«ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1»** ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին
3. **«ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1»** ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից/ներ/ որոշելու մասին
5. **«ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1»** ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. «ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին**

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ համաձայն աղյուսակի՝

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Չափաբաժնի նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | **37,500,000** |

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- **«ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1»** ծածկագրով ընթացակարգի հայտերը թղթային եղանակով բացվել են **2024 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 12:00-ին:**
- Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել:
- Հրավերի վերաբերյալ պաշտոնական հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:
- **«ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1»** ծածկագրով ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակիցը/ները//.

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | էլ.փոստ |
|---|---|---|
| 1 | **«ՍՏՈՒԴԻՈ23» ՍՊԸ** | info@studio23.am |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. **«ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին**

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը/ները/ հայտը/երը/ կազմել և ներկայացրել է/են/ **«ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.
- Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ՝ **«ՍՏՈՒԴԻՈ23»** ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

Չեն ներկայացվել՝

- **Հրավերով սահմանված կազմակերպության կողմից ներկայացվող աշխատակազմում ընդգրկված անհրաժեշտ մասնագետների ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ համապատասխան մասնագիտական փորձը հիմնավորող փաստաթղթերը՝ ռեզյումե, աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում), ՊԵԿ-ից տեղեկանք, վկայագիր, հավաստագիր և այլ փաստաթղթեր (Տես՝ հրավերի 2-րդ կետի 2.2.1 ենթակետի Բ և Գ պարբերությունները) ,**
- **Ներկայացված էսքիզային նախագծի մեջ առկա չեն տարածքի առանձնացված հատվածների չափերի մասին նշումներ (քմ. -երով արտահայտված), ինչն անհրաժեշտ է հրավերով սահմանված Տեխնիկական բնութագրի (Նախագծման առաջադրանք) հետ համապատասխանելիությունը որոշելու համար:**
- **Ներկայացված գործակալության պայմանագրում բացակայում է կնքման ամսաթիվը:**

Որոշվեց՝

1. Նիստը կասեցնել:
2. Ծանուցել **մասնակցին՝ առաջարկելով** շտկել արձանագրված անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- **«ՍՏՈՒԴԻՈ23» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջված փաստաթղթերը:

3. **«ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին**

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակցի/ների/ գնային առաջարկը/ները/՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| h/h | Մասնակցի անվանումը | Չափաբաժին 1՝ Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում / ՀՀ Երևան Դավթաշեն համայնքում Ֆուտբոլի ակադեմիայի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների խորհրդատվական ծառայություններ/ | | |
|---|---|---|---|---|
| | | Մասնակցի/ների/ կողմից ներկայացված գները | | |
| | | Արժեք (ինքնարժեք+շահույթ) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | **«ՍՏՈՒԴԻՈ23» ՍՊԸ** | **30,500,000** | **6,100,000** | **36,600,000** |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից/ներ/ որոշելու մասին**

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ հաստատել ընթացակարգի մասով Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների ցանկը՝ համաձայն աղյուսակի՝

| Չափաբաժին 1՝ Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | | |
|---|---|---|
| Մասնակցի զբաղեցրած տեղը | Մասնակցի անվանումը | Ընդհանուր գինը՝ ՀՀ դրամ |
| 1 | **«ՍՏՈՒԴԻՈ23» ՍՊԸ** | **36,600,000** |

2. Ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից **«ՍՏՈՒԴԻՈ23» ՍՊԸ-ին**:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. «ՀՖՖ-ՆԾՁԲ-2025/1» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և հայտարարելու մասին**

և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 14-րդ կետի 5-րդ ենթակետի՝

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

2. Անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ մեկ մասնակից է հայտ ներկայացրել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

*Ա. Նիկողոսյան* ____________________

*անդամներ՝*

*Տ. Ասատրյան* ____________________

*Վ. Ամիրյան* ____________________

*Մ. Կոբալյան* ____________________

*քարտուղար՝*

*Օ. Կիրակոսյան* ____________________